ԱՇԽԱՐՀԻ

Աշխարհում միլիոնավոր կամուրջներ կան: Կամուրջը մարդուն կապում է աշխարհի հետ... Մարդիկ անհիշելի ժամանակներից կամուրջներ են կառուցել: Կամուրջը չափազանց կարևոր է եղել հնում, երբ մարդիկ տեղաշարժվել են ոտքով, ձիերով կամ կառքով: Կամուրջը նույնքան կարևոր է նաև հիմա, թեև մարդն արդեն օդով էլ է տեղից տեղ գնում:

Կամուրջները պատմում են իրենց ժամանակաշրջանի ու մարդու երևակայության թռիչքի մասին: Աշխարհում կան կամուրջներ, որոնք ճարտարապետական գլուխգործոցներ են:

Արի զարմանանք, հիանանք ու աշխար-

Աշխարհի ամենաբարձր և ամենաերկար կամուրջը գտնվում է Ֆրանսիայում: Կամրջի ամենաբարձր կետը հասնում է 341 մետրի: Այն իր բարձրությամբ հաղթել է նույնիսկ էյֆելյան աշտարակին: Կամրջի երկարությունը 2500 մետր է:

Չինաստանում կառուցվել է մի կամուրջ, որն աշխարհի ամենաերկար ծովային կամուրջն է: Նրա երկարությունը 36 կիլոմետր է:

Ամենամեծ բնական կամուրջը Օիաածանի կամուրջն է: Այն գտնվում է Ամերիկայի Յուտա նահանգում: Կամրջի հիմքից մինչև կամարի ամենաբարձր մասը մոտ 90 մետր է, իսկ երկարությունը 84 մետր է:

Բնական են կոչվում այն կամուրջները, որոնք ոչ թե մարդիկ են կառուցել, այլ բնությունը:



ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

Սա աշխարհի ամենաթանկարժեք կամուրջն է: Գտնվում է Ճապոնիայում: Այն ավելի քան 13 կիլոմետր երկարություն ունի: Իսկ կառուցելու համար ծախսվել է 8 ու կես միլիարդ դոլար:

Այս կամուրջը Ամերիկայի ամենաերկար կամուրջն է: Այն նաև ամբարտակի դեր է կատարում. «սանձում է» լճի ջրերը:

Կինտայի կոչվող կամարաձև այս կամուրջը Ճապոնիայում է: Այն շատ հին է, մոտ 400 տարեկան: Այն դիմակայել է բազում փոթորիկների ու երկրաշարժների...

Հետաքրքիրն այն է, որ չնայած կամուրջը կառուցվել է փայտից, բայց ոչ մի հատիկ մեխ չի օգտագործվել:

մրցույթը մոտենում է:

Այս հեքիաթային կամուրջը Թաուերյան կամուրջն է: Կառուցված է Անգլիայում, Թեմզա գետի վրա: Այն 11 հազար տոննա է կշռում: Կառուցվել է այն ժամանակ, երբ տեխնիկան զարգացած չէր: Բայց կամուրջն այնքան կատարյալ է կառուցվել, որ մինչև հիմա աշխատում է իր հին մեխանիզմով:

Ջրային այս կամուրջը կառուցված է Գերմանիայում: Երբևէ տեսե՞լ ես, որ հսկա նավերն անցնեն կամրջի տակով ու կամրջի վրայով... Այս կամուրջն իրար է կապում Բեռլին և Ռեյն քաղաքների նավահանգիստները:

Ոսկե դարպասներ. գեղեցիկ անվանումով այս կամուրջն ամերիկյան Սան Ֆրանցիսկո քաղաքից է սկիզբ առնում: Ամեն առավոտ հազարավոր ավտոմեքենաներ 4 շարքով անցնում են այս կամրջով: Ծովի աղի ջուրն ու խոնավ օդն անընդհատ քայքայում են կամուրջը: Քառասուն վարպետներ անընդհատ հետևում են կամրջի արտաքին տեսքին և ամրությանը, նորոգում ու ներկում կամուրջը, որ նրա յուրահատուկ գույնը պահպանվի...

Ես սիրում եմ իմ երկիրը

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Դեռ հին ժամանակներում Հայաստանում նույնպես կառուցվել են հետաքրքիր ու գեղեցիկ կամուրջներ: Դրանցից ոչ բոլորն են պահպանվել մինչև այսօր: Մեր կամուրջները հիմնականում տուֆից ու բազալտից են կառուցվել: Հայկական կամուրջներն արժեքավոր են ոչ թե նրանով, որ ճոխ են ու շքեղ, ինչպես աշխարհի շատ կամուրջներ, այլ նրանով, որ հին են, շա՜տ հին: Իսկ հնությունն արդեն մեծ արժեք է: Եվ պետք է պահել - պահպանել այդպիսի հարստությունը: Տե՛ս մի քանիսի նկարները:



Քարավազի կամուրջը (Խուդափերին)

Արցախի հին կամուրջներից մեկն է սա: Կառուցված է 13-րդ դարում, Արաքս գետի վրա: Տե՛ս, թե ի՜նչ երկար է այն:

Լոռի բերդի կամուրջը

Ստեփանավանից ոչ հեռու՝ Ձորագետ և Ուռուտ կիրճերի հատման մասում, կամարակապ շատ հին մի կամուրջ կա: Կամրջի ձախ կողմում՝ ժայռի վրա, խաչերի տարբեր քանդակներ կան:

Ջարվանեսի կամուրջը

Արցախի մյուս գեղեցկուհի կամուրջն էլ սա է: Այն Տումի վտակի վրա է կառուցված: Տե՛ս, թե ի՜նչ բարակ է այն, բայց ինչքա՜ն ամուր է կառուցված, որ մինչև հիմա կանգուն է:

մրցույթը մոտենում է: